

# ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 փետրվար, 2025 թվականի N 5-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ որոշում եմ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի պարտականությունները կատարողի նախաձեռնությամբ 2025 թվականի փետրվարի 7-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

- «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2025 թվականի մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդագանցող հաստատելու մասին հարցը:
- «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2025 թվականի մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդագանցող հաստատելու մասին հարցը:
- «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Առաջինի միջազգային ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2025 թվականի մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդագանցող հաստատելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Վ. ԹԵՎՈՍՅԱՆ

04 փետրվար, 2025 թվական  
ք. Երևան